

ԳՆԱԾԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԴԻՄԵՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հ. Զ. ՂԱՀՐԱՍՏԱՆՅԱՆ

Գնաճն ամենահակասողիական երևույթն է.
այն խաբույմ է բոլորին:

Կառլ Բլեխինգ

Ցանկացած երկրի տնտեսական քաղաքականության հիմնական գնահատականը նրա տնտեսական աճի ցուցանիշն է: Երկարաժամկետ հատվածում տնտեսական աճը պայմանավորված է առաջարկի գործոններով՝ բնական և աշխատանքային ռեսուրսներ, կապիտալ, տեխնոլոգիաներ: Տնտեսական աճը կախված է նաև պահանջարկի գործոններից: Վերջիններս, ընդհանուր առմամբ, ենթադրում են արտադրական ներուժի իրացման համար անհրաժեշտ համախառն ծախսումների բավարար մակարդակ: Բաշխման գործոնները, որոնք պահանջարկի գործոնների հետ տնտեսական աճի ապահովման պայման են, ենթադրում են արտադրական ներուժի ոչ միայն լրիվ, այլև արդյունավետ օգտագործում:

Մոնետարիստները գտնում են, որ դրամավարկային քաղաքականությունն էական ազդեցություն է թողնում տնտեսական կոնյուկտուրայի վրա, և տնտեսական ակտիվության փոփոխություններն ուղեկցվում են փողի առաջարկի տատանումներով: Գների մակարդակն, իր հերթին, էականորեն կախված է փողի առաջարկից, և գների մակարդակի ցանկացած աճի, միանշանակորեն, նախորդում է փողի առաջարկի որոշակի աճ:

Հետպատերազմյան շրջանի մոնետարիզմի առաջնորդ Մ. Ֆրիդմենը, հստակեցնելով և ամբողջացնելով մոնետարիստների տեսակետը, նշում է. «Մեր դիրքորոշումն է. փողը նշանակություն ունի անվանական տնտեսական աճի համար երկարատև ժամանակահատվածում, իսկ իրական տնտեսական աճի համար՝ կարճատև ժամանակահատվածում»¹: Ոչ թե ամբողջական ծախսումները, այլ փողի զանգվածն է ձևավորում գների մակարդակը, որով էլ Ֆրիդմենը բացատրում է փողի զանգվածի և անվանական տնտեսական աճի միջև կապը:

Քեյնսականները պնդում են, որ միակ ուղին, որի միջոցով փողի քանակն ազդում է տնտեսական ակտիվության վրա, տոկոսադրույթներն են կամ դրանց փոփոխությունները: Փաստորեն նրանք տնտեսական աճը դիտարկում են պահանջարկի գործոնների տեսանկյունից՝ համախառն ծախսումների ավելացում, էժան փողերի քաղաքականություն և ցածր տոկոսադրույթներ: Ինչ վերաբերում է հարկաբյուջետային քաղաքականությանը, ապա այն ուղղում են սպառման կրճատմանը, որպեսզի խուսափեն գնաճից:

Անդրադառնալով տեսաբանների այս հակասական կարծիքներին՝ Մոդիլյանին գրում է, որ «գոյություն չունի լուրջ տարածայնություն մոնետարիստների և ոչ մոնետարիստների միջև, և, ինչպես Ֆրիդմենն է ինչ-որ ժամանակ ասել՝ մենք բոլորս քեյնսականներ ենք, ես պատրաստ եմ ասելու, որ մենք բոլորս մոնետարիստներ ենք, եթե մոնետարիզմը պարզապես ընդգծում է գների մակարդակի ձևավորման և տնտեսական աճի ապահովման վրա փողի առաջարկի գործոնի առաջնայնությունը: Այս դեպքում Քեյնսը նույնպես մոնետարիստ է»²:

¹ Տե՛ս В. Н. Костюк, История экономических учений, М., 1998, էջ 179-203.

² Նույն տեղում:

Ինչև իցե, եթե երկարատև ժամանակահատվածում տնտեսական աճը պայմանավորված է առաջարկի գործոններով, ապա կարճատև ժամանակահատվածում արտադրության և զբաղվածության մակարդակները որոշվում են պահանջարկի գործոններով: Եվ գների տատանումները, որոնք ձևավորվում են ամբողջական ծախսումներով, իրենց ազդեցությունն են ունենում տնտեսական ակտիվության վրա: Տնտեսավարող սուբյեկտները, բախվելով ավելցուկային պահանջարկի հետ, կարճատև ժամանակահատվածում ավելացնում են իրենց արտադրանքի ծավալները, և գներն ու արտադրության իրական ծավալն աճում են միաժամանակ: Իսկ երկարատև ժամանակահատվածում ավելանում է անվանական աշխատավարձը, նվազում է ամբողջական առաջարկը՝ հասնելով իր նախկին մակարդակին, իսկ գների մակարդակն ավելի է բարձրանում:

Այս առումով էլ կարևորվում է գների մակարդակի կայունացումը, գնաճի բարձր տեմպերի զսպումը՝ որպես անցման գործընթացի անկյունաքար: Ահա թե ինչու ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է, և իր հիմնական խընդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության որոշակի ծրագրեր: Դրամավարկային քաղաքականությունը կարող է խթանել համախառն պահանջարկը և նվազեցնել գործազրկությունը, որը կհանգեցնի գնաճի, կամ էլ՝ նվազեցնել համախառն պահանջարկը և զսպել գնաճը, որը կրերի գործազրկության աճի:

Մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ տնտեսական քաղաքականության այնպիսի նպատակների իրականացումը, ինչպիսին է կայուն տնտեսական աճի ապահովումը, հնարավոր է գների ցածր և կայուն մակարդակի պայմաններում: Գնաճը տնտեսական իրավիճակը ձևավորում է մի քանի ուղղություններով՝ ներգործելով ՀՆԱ-ի իրական ծավալի, ներդրումների ծավալի, իրական աշխատավարձի, իրական տոկոսադրույքների վրա:

Բացասական իրական տոկոսադրույքները (երբ անվանական տոկոսադրույքն ավելի ցածր է, քան գնաճը) նվազեցնում են տոկոսավճարների գնողունակությունը, և, հետևաբար, նվազում է խնայելու ցանկությունը: Փոխարենը խնայողները գնում են անշարժ գույք, թանկարժեք մետաղներ, երկարաժամկետ օգտագործման առարկաներ: Վերջիններին նկատմամբ պահանջարկի աճն իր հեթթին գնաճի պատճառ է հանդիսանում:

Ընդհանուր առմամբ գնաճը տնտեսության վրա ազդում է՝ ներգործելով արտադրության ընդհանուր ծավալի վրա (մակրոտնտեսական էֆեկտ) և ռեսուրսների փոխհատուցման և արդյունավետության վրա (միկրոտնտեսական էֆեկտ): Առաջինի ժամանակ, երբ բարձրանում է գների մակարդակը, բարձրանում են անվանական տոկոսադրույքները, որոնք էլ հանգեցնում են սպառողների և ձեռնարկությունների կողմից սպառողական ապրանքների և ներդրումների վրա կատարվող ծախսումների կրճատմանը (երբ փողի քանակն անփոփոխ է): Գնաճը տնտեսական աճի վրա ազդում է ոչ միայն ներդրումների ծավալի կրճատման ճանապարհով, այլ նաև ներդրումների արդյունավետության նվազեցման միջոցով: Վերլուծությունները ցույց են տվել, որ գնաճը 2/3-ով տնտեսական աճի վրա ազդում է ներդրումների արդյունավետության իջեցման միջոցով կամ, որ մինչև 1/3-ը է, արտադրողականության նվազման միջոցով, և միայն 1/3-ն է բաժին ընկնում մակրոտնտեսական էֆեկտին: Հաշվարկվել է, որ գնաճի տեմպերի 10 %-ով նվազեցումն ապահովել է տնտեսական աճ՝ 0.4-0.5 տոկոսային կետով: Ընկալիկ տվյալների հիման վրա վերլուծությունների արդյունքում հաշվարկվել է նաև, որ եթե գնաճի արդեն բարձր տեմպերը կրկնապատկվում են, տնտեսական աճը նվազում է 1.7 տոկոսային կետով³:

Ցածր գնաճն էական ազդեցություն չի թողնում տնտեսական աճի վրա, իսկ թողած ազդեցությունը կարող է դրական լինել: Սակայն գնաճի բարձր մակարդակի պայմաններում նրա բացասական ազդեցությունն ակնհայտ է: Տնտեսական զարգացվածության տարբեր մակարդակներում գտնվող երկրների տնտեսական ցուցանիշների վերլուծությունները ցույց են տվել, որ գնաճը տնտեսական աճի վրա սկսում է բացասական ազդեցություն գործել այն ժամանակ, երբ նրա տարեկան տեմպերը գերազանցում են 8 %-ը⁴: Ընդ որում, այստեղ առկա է մի նրբություն. զարգացած արդյունաբերական երկրներում, որտեղ գնաճի մակարդա-

³ St'u M. Sarel, Nonlinear Effects of Inflation on Economic Growth, Vol 43, No-1, March 1996, pg. 214.

⁴ St'u նույն տեղը, էջ 199:

կը ցածր է, տնտեսական աճի և գնաճի՝ բնական մակարդակից փոքր-ինչ շեղման պարագայում դրանց միջև նկատվում է հակադարձ կապ, իսկ զարգացող երկրներում՝ միայն գնաճի բավականին բարձր տեմպերն են վտանգավոր տնտեսական աճի ապահովման համար: Թերևս Հայաստանի Հանրապետության համար անհնար է հաշվարկել այդ բեկման մակարդակը, քանի որ այն հաշվարկելու համար անհրաժեշտ են մի քանի բիզնես-ցիկլերի մասին տվյալներ:

Այժմ զարգացած տնտեսություն ունեցող երկրները, որպես գերխնդիր, կարգավորում են գնաճի մակարդակը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ երկարատև, կայուն տնտեսական աճը մեծ կախվածություն ունի գնաճի մակարդակից: ՀՀ-ում ևս Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է:

Ստորև ներկայացվում է, թե ինչպիսի շարժ են դրսևորել գները և տնտեսական աճը ՀՀ տնտեսության անցումային շրջանում:

1991 թվականին Հայաստանի Հանրապետությունը ձեռք բերեց անկախություն, ՀՀ տնտեսությունը կտրուկ անկում ապրեց: Տնտեսական անկումը զուգորդվեց գնաճի բարձր տեմպերով, որն իր գագաթնակետին հասավ 1993 թվականի վերջերին, երբ տարվա միայն չորրորդ եռամսյակում գրանցվեց 1626 % գերգնաճ՝ մեծ չափերով նվազեցնելով բնակչության իրական եկամուտները:

Սկսած 1991 թվականից նախկին ԽՍՀՄ տարածքում գնաճի տեմպերը հաշվվում էին տասնյակ հազար տոկոսներով: 1995 թվականին նախորդող հինգ տարիների ընթացքում ՀՀ-ում գներն աճեցին 103 հզ անգամ, Վրաստանում՝ 274 հզ անգամ, Թուրքմենստանում՝ 138 հզ անգամ, Բելառուսում՝ 48 հզ անգամ: Ռուսաստանում այդ ցուցանիշը համեմատաբար համեստ էր՝ 4,8 հզ անգամ: Նվազագույն աճ գրանցվեց Լատվիայում և Էստոնիայում՝ համապատասխանաբար՝ 78 և 87 անգամ⁵:

1993 թվականին 1991 թվականի համեմատությամբ ՀՀ-ում համախառն ներքին արդյունքը նվազել է մոտ 50 %-ով⁶: Միաժամանակ տեղի էր ունենում ազգային արժույթի արժեզրկում: Մինչև 1992 թվականը բոլոր պետություններում գնաճի վարքագիծը նույնն էր, սակայն 1993-ից դրսևորվեցին որոշակի տարբերություններ՝ պայմանավորված ազգային արժույթների ներդրմամբ: 1993-94 թվականներին ՀՀ-ն, Վրաստանը, Ուկրաինան, Տաջիկստանը հիպերգնաճ ունեցան, որը որոշ երկրներում շարունակվեց նաև 1995 թվականին:

1995 թվականին արդեն ԱՊՀ վեց երկրներ ձեռք բերեցին գների կայունություն, որն էլ հիմքեր ստեղծեց ֆինանսական կայունացման համար, իսկ տնտեսական աճ գրանցվեց ԱՊՀ երկրներից միայն ՀՀ-ում՝ 6,9 %⁷:

Այդ ժամանակահատվածում գնաճի դրսևորումները դրամական երևույթ էին: Մինչև 1990 թվականը ԽՍՀՄ տարածքի միակ էմիսիոն կենտրոնը հանդիսանում էր պետքանկը: Իրականացվող դրամական քաղաքականության արդյունքում վարկային էմիսիայի ծավալները գերազանցեցին տնտեսության իրական հատվածի հնարավորությունները: Գնային ազատականացում սկսելուց հետո փողի առաջարկի ազդեցությունը գնաճի վրա ավելի արտահայտիչ էր:

Գնաճի բարձր տեմպերի հետևանք հանդիսացան բարձր տոկոսադրույքները, պետական ներքին պարտքի աճը, դոլարիզացիայի արմատավորումը: Մեծացավ փողի շրջապտույտի արագությունը, որն էլ հանգեցրեց գնաճի լրացուցիչ աճի:

Ճգնաժամից դուրս գալու կառավարության առաջին քայլն ազգային արժույթի՝ դրամի թողարկումն էր, որը հարաբերվում էր ռուբլու հետ 1:200, իսկ ԱՄՆ դոլարի հետ՝ 1:0.07 հարաբերությամբ: Սակայն դրանը 1994 թվականին արագ տեմպերով արժեզրկվեց, և գնաճը 1994 թվականի առաջին կիսամյակում 1993 թվականի վերջի նկատմամբ կազմեց 838 % տարվա վերջին հասնելով 1761 %-ի⁸:

⁵ Հաշվարկված են ըստ ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարության տվյալների:

⁶ Տե՛ս "Национальные счета стран Содружества независимых государств, статистический сборник", М., 1999, էջ 12-13:

⁷ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն, 1995, էջ 9:

⁸ Հաշվարկված են ըստ ՀՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարության տվյալների:

1993-95 թթ. կայունացման և տնտեսական աճի ժամանակահատված էր, երբ կառավարությունը և նոր հիմնադրված Կենտրոնական բանկը միացյալ ուժերով ձգտում էին զրույցի հիպերգնաճը և տնտեսական անկումը: Վերջիններիս հասնելու համար տնտեսական կայունացման ծրագիրն առաջնություն էր տալիս կոշտ դրամավարկային, կոշտ հարկաբյուջետային քաղաքականությանը, արտադրության վերականգնմանը, արտահանման խթանմանը, ընթացիկ հաշվի դեֆիցիտի կրճատմանը:

Կառավարությունը վարկավորվում էր Կենտրոնական բանկի կողմից: Վարկավորումը բավականին անհավասարաչափ բնույթ էր կրում և ճնշումներ էր ստեղծում դրամի և փոխարժեքի, և՛ գների վրա: Այդ ընթացքում ՀՀ պաշտոնական պահուստներն իջան բավականին ցածր մակարդակի, իսկ կայունացման քաղաքականությունն իրականացվում էր առանց ֆինանսական օգնության (ԱՄՆ-ի առաջին վարկը եկել է միայն 1994 թվականի դեկտեմբերին): 1994 թվականին սկսվեց գների ազատականացման գործընթացը, որին հաջորդեց բնակչության իրական եկամուտների անկումը և գործազրկությունը:

Մակրոտնտեսական քաղաքականության իրականացման համար կարևորվում էր կառուցվածքային բարեփոխումների իրականացումը՝ չվճարումների վերացում, սեփականաշնորհում, հարկային օրենսդրության փոփոխություններ, ֆինանսական շուկայի, ազատ առևտրի և ներդրումային քաղաքականության զարգացում: Վերջիններս նախադրյալներ կստեղծեին տնտեսական աճի ապահովման համար:

1994 թվականին, միջազգային ֆինանսական և դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, ՀՀ կառավարությունը սկսեց իրագործել մակրոտնտեսական կայունացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագրեր: Կնքվեցին վարկային պայմանագրեր Համաշխարհային բանկի (ՀԲ) կազմակերպությունների և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ, ըստ որոնց ԱՄՀ-ն վարկեր պետք է տրամադրեր Կենտրոնական բանկին, իսկ ՀԲ-ն՝ Կառավարությանը⁹:

ՀՀ-ն 1992 թվականի մայիսի 28-ին, ստորագրելով համաձայնագրի հոդվածները, դարձավ հիմնադրամի անդամ: ԱՄՀ-ի հետ իրականացվել են Համակարգային բարեփոխումների ֆինանսավորման մեխանիզմ (STF, 33.75 մլն ՄԴՌ) և սթենդ-բայ (stand-by, 43.88 մլն ՄԴՌ, ստացվել է 13.5 մլն ՄԴՌ) համաձայնագրերով նախատեսված կայունացման ծրագրերը, որոնց հիմնական նպատակն էր հասնել տնտեսության կայունացման՝ պետբյուջեի դեֆիցիտի և փողի առաջարկի կոշտ վերահսկողության և արժույթային շուկայում ինտերվենցիաների իրականացման միջոցով:

1996 թվականից գործում է 3 տարվա կայունացման Կառուցվածքային բարեփոխումների ընդլայնված մեխանիզմ (ESAF) ծրագիրը՝ 101.25 մլն ՄԴՌ:

1996 թվականի հունիսից ՀՀ ԿԲ-ն անցավ ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի, որի հիմնական նպատակն արտաքին աշխարհում երկրի մրցունակության բարձրացումն էր:

1993 թվականի ապրիլին Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի հետ կնքվեց վարկային պայմանագիր, ըստ որի ՀՀ կառավարությունը պետք է ստանար 12 մլն ԱՄՆ դոլար: Վարկի գումարն ուղղվելու էր կառավարման համակարգի բարեփոխումներին, տնտեսական քաղաքականության ծրագրերի մշակմանը, ռեսուրսների մոբիլիզացիայի խընդիրներին, հարկային համակարգի բարեփոխումներին, ձեռնարկությունների վերակառուցմանը: Այնուհետև, պայմանագրեր կնքվեցին Միջազգային զարգացման գործակալության հետ: Վերջինիս գործունեության նպատակը այնպիսի երկրների տնտեսական զարգացման և կենսամակարդակի բարձրացմանը աջակցության ցուցաբերումն է, որոնք տնտեսական զարգացվածության ցածր մակարդակի պատճառով ի վիճակի չեն օգտվել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջոցներից: Ընդ որում, այս ընկերակցության տրամադրած վարկերը ծայրահեղ արտոնյալ պայմաններով էին՝ 0.75 %:

Դրանցից ամենամեծածավալը 1996 թվականի մարտից գործող 60 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ Կառուցվածքային բարեփոխումների վարկային ծրագիրն էր (ԿԲՎ)՝ ձեռնարկությունների վերակառուցման, սեփականաշնորհում, առևտրային բանկային համակարգի հզոր

⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», Վերահսկիչ պալատի տեղեկանքներ, թիվ 13(46), 30 հունիսի, 1998, էջ 86-87:

րացման, կառավարության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Արդեն 1994 թվականին ՀՀ տնտեսությունում նկատվեց աշխուժացում, և այդ տարի իրական տնտեսական աճը կազմեց 5.4 %, հաջորդող տարիներին հասնելով 6.9 %-ի՝ 1995 թվական, 5.8 %-ի՝ 1996 թ., 3.1 % 1997 թ. և 7.2 %՝ 1998 թ.¹⁰: 1995 թվականը համարվեց մակրոտնտեսական կայունացման, շուկայական հարաբերությունների արմատավորման և տրնտեսական զարգացման տարի, որի արդյունքներն էին տարվա ընթացքում կայուն տնտեսական աճը, համեմատաբար ցածր գնաճը, բնակչության իրական եկամուտների աճը, սեփականաշնորհման և կառուցվածքային բարեփոխումների համար տնտեսական և իրավական հիմքերի խորացումը:

1996-ին գները շարունակվել են կայունաճով և գրանցվել է 5.7 % գնաճ: Գնաճի միջին ամսական ցուցանիշը 1995 թվականի 2.35 %-ից նվազելով հասել է 0.46 %-ի¹¹: Գնաճի զսպման գործում զգալի դեր են խաղացել ՀՀ ԿԲ կողմից իրականացված կոշտ դրամավարկային քաղաքականությունը, նախորդ տարիների համեմատությամբ գների ազատականացման ցածր մակարդակը, դրամի կայուն փոխարժեքը, ՀՀ ինտեգրացումը միջազգային տնտեսությանը, որով պայմանավորվեցին ներքին ապրանքների գների համապատասխանեցումը միջազգային շուկայի գներին, ներմուծման ծավալների աճը:

1997-ին գրանցվել է ավելի բարձր գնաճ, քան նախորդ տարի: Եվ եթե 1996 թվականին փոխարժեքի փոփոխության ազդեցությունը գների ձևավորման վրա կարելի էր չեզոք համարել, 1997 թվականին այդպես չէր: Այսպես, 1997 թվականին փողի զանգվածի 29.7 % աճի և ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 13.7 %-ով արժեզրկման պայմաններում գրանցվել է 21.9 % գնաճ: Միջին ամսական գնաճը, ավելի քան երեք անգամ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, կազմել է 1.66 %¹²: 1997 թվականին գնաճի վրա էականորեն ազդել են հարկային համակարգում բարեփոխումները հարկային վարչարարության խստացման և հարկադրույքների բարձրացման առումով, տարվա առաջին կիսամյակում էմիսիոն աղբյուրների հաշվին բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը, պետության կողմից կարգավորվող գների աճը, նախորդ տարվա նկատմամբ տնտեսական ակտիվության նվազումը, 1996-ի վերջին ամիսներին սկսված փոխարժեքի անկայուն վարքագիծը:

1998-ին գրանցվել է 1.3 % գնանկում: Տարվա ընթացքում կարգավորվում էին տոկոսադրույքները, խմայողությունները և ներդրումները զգալիորեն աճում էին: 1998 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է 0.9 % գնաճ, որն, ընդհանուր առմամբ, իր վրա կրել է նախատեսվածից կոշտ հարկաբյուջետային քաղաքականության և փոխարժեքի կայուն վարքագծի ազդեցությունը:

1998 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացվող տնտեսական քաղաքականությունն ընթացել է չնախատեսված միջավայրում: 1998 թվականի օգոստոսին Ռուսաստանի տնտեսության՝ ճգնաժամի մեջ հայտնվելու պայմաններում նվազել են մասնավոր տրանսֆերտները և գործուճային եկամուտները, որոնք, զսպելով ամբողջական պահանջարկը, խորացրել են դեֆլյացիոն պրոցեսները: Վերջինիս նպաստել են նաև ներմուծման ծավալների աճը՝ կապված Ռուսաստանից էժան ներմուծմամբ: Արդյունքում տարին ամփոփվել է 1.3 % գնանկմամբ: Իսկ 1999 թվականի ընթացքում գրանցվել է 2 % գնաճ¹³:

Այստեղ հարկ է նշել, որ գնաճը, լինելով բազմագործոն երևույթ, անցումային շրջանում իր վրա կրել է արտաքին աշխարհի ազդեցությունը, ինչպիսին օրինակ Ռուսաստանի ճգնաժամի վերը նկարագրված ազդեցությունն էր:

Գնաճի արտաքին ազդեցությունը կամ, ինչպես ընդունված է ասել, ներմուծվող գնաճը, տնտեսություն է ներթափանցում երկու ճանապարհով. 1) ազգային արժույթի արժեզրկման արդյունքում ներմուծվող ապրանքների գների աճի կամ համաշխարհային շուկայում գների աճի կամ ներմուծվող հումքի գների աճի միջոցով, 2) ընթացիկ հաշվի դրական մնացորդի կամ կապիտալի մեծածավալ ներհոսքի պատճառով փողի զանգվածի մեծ աճի միջոցով, երբ վերջինս լիովին չի կլանվում տնտեսության կողմից: Այստեղ առաջ է գալիս պահանջարկի գնաճ:

¹⁰ Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 1994-1998 թթ., էջ 3:

¹¹ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն, 1996, էջ 16:

¹² Տե՛ս նույն տեղը, 1997, էջ 17:

¹³ Տե՛ս Գների տեղեկագիր, հունվար-մայիս, 1999, էջ 3:

Գնաճի ներմուծման չափը գնահատվում է՝ կախված սպառողական շուկայում ներմուծման չափից: Ազդեցությունն աճում է այնքանով, որքանով ներմուծվող ապրանքները ներքին շուկայից դուրս են մղում ներքին արտադրանքը:

ՀՀ-ում ներմուծվող գնաճը (կամ գնանկումը) գնալով մեծ բաժին է ստանում գնաճի (գնանկման) ցուցանիշում, բանգի ներքին սպառողական շուկան տարեցտարի ավելի է կախման մեջ մտնում ներմուծվող ապրանքներից՝ 1995-ին 42 %, 1996-ին՝ 46 %, 1997-ին՝ 47%¹⁴: 1998 թվականին նկատվեց համաշխարհային շուկայում գների անկում, և, ըստ ՀՀ ԿԲ գնահատականների, ներմուծման գները՝ նվազել են 7.1 %-ով՝ հիմնականում գազի և նավթամթերքի գների անկման պատճառով:

Կապիտալի ներհոսքը, չնայած ընթացիկ հաշվի դեֆիցիտին, պայմաններ է ստեղծում դրամի փոխարժեքի կայունացման համար, որը, սակայն, լուրջ խնդիրներ է ստեղծում ներքին ապրանքների մրցունակության նվազման և ներմուծման նկատմամբ հակվածության խորացման տեսանկյունից:

Գնաճի տեմպերի զայուրը ֆինանսական կայունության հիմքը դրեց: Այսպես, ֆինանսական շուկայի տոկոսադրույքները¹⁵ սկսեցին կայունանալ 1995 թվականից, երբ դրամով վարկավորման միջին տոկոսադրույքը 1995 թվականի հունիսի 108 %-ից նվազեց 1996 թվականի հունվարին հասնելով 65 %-ի, 1997 թվականին՝ 62 %, այնուհետև 1998 թվականի հունվարին՝ 56 %, իսկ 1999 թվականի սկզբին՝ 44 %:

Ինչ վերաբերում է դեպոզիտների տոկոսադրույքներին, դրանք 1995 թվականի հունիսի 60 %-ից նվազեցին՝ 1996 թվականի հունվարին կազմելով 47 %, 1997 թվականին՝ 33 %, այնուհետև 1998 թվականի հունվարին՝ 28 %, իսկ 1999 թվականի սկզբին՝ 24 %:

Արտարժույթով վարկերի տոկոսադրույքները 1995 թվականի հունիսի 52 %-ից նվազեցին մինչև 1997 թվականին 50 %, 1998-ին հասնելով 43-ի, իսկ 1999 թվականին՝ 45 %:

Ինչ վերաբերում է արտարժութային դեպոզիտների տոկոսադրույքներին, ապա դրանք 1995 թվականի հունիսի 39 %-ից աճեցին 1996 թվականի հունվարին 41 %, 1997 թվականին՝ 30 %, 1998 թվականի հունվարին՝ 22.5 %, իսկ 1999 թվականի սկզբին՝ 22 %:

Իրական տոկոսադրույքները դարձան դրական՝ սկսած 1995 թվականից, երբ գնաճի տեմպերը 1994 թվականի 1761 %-ից նվազեցին, հասնելով 32.2 %-ի: Այս ժամանակ էլ գնաճի կանխատեսելիությունը հանգեցրեց ցածր գնաճի սպասումների ձևավորման, ներդրումների աճի, որն էլ նախադրյալ հանդիսացավ տնտեսական աճի համար:

Անդրադառնալով սղաճի դրամավարկային կարգավորմանը՝ հարկ է նշել, որ չնայած անցումային շրջանում ՀՀ-ում զգալիորեն կրճատվում էր փողի զանգվածի աճի տեմպը, սակայն այն առաջ էր անցնում սպառողական գների աճի տեմպից: Փողի զանգվածի առաջանցիկ աճի պայմաններում գնաճի ցածր մակարդակը պայմանավորված էր տնտեսական աշխուժացմամբ, ազգային արժույթի նկատմամբ պահանջարկի աճով, գնաճի նկատմամբ սպասումների նվազմամբ:

Դրամավարկային, արժութային և հարկաբյուջետային քաղաքականությունների կորդինացումը հանդիսացել է մակրոտնտեսական կարգավորման արդյունավետ գործիք՝ ուղղակիորեն ազդելով ազգային արժութային ամրապնդման և գնաճի տեմպերի նվազման, ինչպես նաև, անուղղակիորեն ազդելով համախառն պահանջարկի ձևավորման վրա:

Այսպիսով, կարելի է հավաստել, որ անցումային շրջանում գնաճի զայման գործում որոշիչ դեր խաղացին իրականացվող դրամավարկային, հարկաբյուջետային և կառուցվածքային քաղաքականությունը, արտաքին առևտրի ազատականացումը, միջազգային շուկային ազգային տնտեսության ինտեգրացումը:

А. ДЖ. КАГРАМАНЯН - Особенности регулирования и проявления инфляции в Республике Армения. - Широко известно, что в долгосрочный период экономический рост формируется под воздействием факторов предложения, а в краткосрочный период факторы спроса воздействуют на уровень производства и занятости. Таким образом, цены, формирующиеся в результате совокупных расходов, имеют свое прямое воздействие на экономическую активность.

В общих чертах, инфляция имеет двойной эффект влияния на экономический рост: во-

¹⁴ Տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն, 1997, էջ 8:

¹⁵ Տե՛ս International Financial Statistics (IFS), International Monetary Fund, February 1999, էջ 96-97:

первых, через воздействие на совокупный объем инвестиций, или макроэкономический эффект инфляции, и во-вторых, в результате эффективности использования ресурсов, или микроэкономический эффект инфляции. Макроэкономический эффект повышения цен, при неизменном уровне денежной массы, способствует росту номинальных процентных ставок, что в свою очередь снижает расходы потребителей и предприятий на товары и инвестиции. Но инфляция воздействует на экономический рост не только путем сокращения инвестиционных расходов, но и посредством понижения эффективности инвестиций.

В настоящее время в странах с развитой экономикой сверхзадачей центральных банков является поддержание стабильного уровня цен, принимая в основу тот факт, что долгосрочный и устойчивый темп экономического роста возможно обеспечить в условиях низкого и стабильного уровня цен.

Основной задачей Центрального банка РА также является поддержание низкого и стабильного уровня инфляции.

В статье приведена динамика экономического роста и инфляции в РА с 1994 по 1999 г., когда в процессе сдерживания инфляции особо важную роль сыграли проведенные денежно-кредитная, налогово-бюджетная и структурная политика, либерализация внешней торговли, интеграция с мировым рынком.